

ՏԱՃԱՐ

ԺՈՂՈՎՐԴԱՅԻՆ ՇԱԲԱԹԱԹԵՐԹ

ԿՐՕՆԱԿԱՆ, ԱԶԳԱՅԻՆ, ԳՐԱԿԱՆ

ՏՆՐՈՒՆ-ԽՄԱՐԱԳԻՐ

ԶԱՐԲԱՅՐ ՔԱՀԱՆԱՅ ԿԷՋԻՐԵԱՆ

Ա. ՏԱՐԻ

ՇԱԲԱԹ, 31 ՅՈՒՆԻՍ 1910

ԹԻԻ 18

“ՏԱՃԱՐ” Ի

ՊԱՅՄԱՆՆԵՐԸ

ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ

Պոլսոյ համար տարեկան	35 դրու
Գնառուաց համար տարեկան	40 »
Արսասահմանի համար տարեկան	10 ֆրանկ
Ձեռքի կը ծախուի պրակը	40 փարա

Բաժանորդագրիները կանխիկ են

«ՏԱՃԱՐ»-ի թէ վարչական և թէ խմբագրական գործերուն համար պէտք է դիմել առ
Զարմար Բահանայ Կեղիւրեան, Կ. Պոլիս, Պեփիքաւ, Հայոց Եկեղեցի

دوسمادتده بشکطاشده ارمنى کلیساستده (داجار) فزته سی مدیری باباس زارمار

Rev. Père Zarmaïr Guézurian, Rédacteur de la Revue «DADJAR»
Constantinople, Béchiktache Eglise Arménienne

ՏՊԱԳՐՈՒԹԻՒՆ Օ. ԱՐՁՈՒՄԱՆ
Զարմարճըրար, Ֆակորեան խան

ԽՄԲԱԳՐԱԿԱՆ ՄԱՐՄԻՆ

1. Տ. Գնէլ Ծ. Վրդ. Գալէմբարեան
2. Տ. Տիրայր Ծ. Վրդ. Մարգարեան
3. Տ. Ղեւոնդ Ծ. Վրդ. Դուրեան
4. Տ. Սուրէն Վրդ. Գալէմբարեան
5. Տ. Հմայեակ Բնյ. Էքսէրճեան
6. Տ. Արիստակէս Բնյ. Հիսարկեան
7. Տ. Զարմայր Բնյ. Կէզիւրեան

ՎԱՐՉԱԿԱՆ ՄԱՐՄԻՆ


1. Տ. Ղեւոնդ Ծ. Վրդ. Դուրեան
2. Տ. Հմայեակ Բնյ. Էքսէրճեան
3. Տ. Խորէն Բնյ. Յարութիւնեան
4. Տ. Սուրբաս Բնյ. Պալլաճեան
5. Տ. Պողոս Բնյ. Պէյազճեան
6. Տ. Խորէն Բնյ. Վարդանեան
7. Տ. Դէորդ Բնյ. Անանեան
8. Տ. Դրիգոր Բնյ. Ճէպէճեան

ԳՈՐԾԱԿԱԼՈՒԹԻՒՆՔ

«Տ Ա Ճ Ա Ր» ԿՐՕՆԱԹԵՐԹԻ

ԱՂԻՐԱՆՈՒՊՈԼԻՍ.—Առաջն. Փոխանորդ Տ. Արսէն Բնյ. Դերձակեան
ԱՂԵՔՍԱՆԴՐԻԱ.—Տ. Ռուբէն Բնյ. Գաւթիկեան
ԱՄԵՐԻԿԱ.—Առաջն. Փոխանորդ Տ. Պողոս Վրդ. Գաթիսեան
ԱՅԼԹԱՊ.—Տ. Գարեգին Բնյ. Պողարեան
ԱՅԻՕՆ ԳԱՐԱՆՆԱՐ.—Տ. Խաչատուր Ա. Բնյ. Տօնէլեան
ԲԱԲԵՐԴ.—Մ. Սանոսեան էֆ.
ԳԱՂԱՏԻԱ.—Առաջնորդ Տ. Բաբգէն Ծ. Վրդ. Կիւլէսէրեան
ԳԱՀԻՐԷ.—Առաջնորդ Տ. Մկրտիչ Ծ. Վրդ. Աղաւնունի
ԵԴԵՍԻԱ.—Ք. Թիւրաքեան էֆ.
ԵՕԶՂԱՏ.—Առաջնորդ Տ. Խորէն Ծ. Վրդ. Դիմաքսեան
ԵՐԶԵՎԱ.—Առաջնորդ Տ. Երուանդ Վրդ. Փէրտաճեան
ԶՄԻՌՆԻՒԱ.—Տ. Յարութիւն Բնյ. Տ. Մարգարեան
ԷՍԿԻՇԷՀԻՐ.—Տ. Գալուստ Բնյ. Տ. Գալուստեան
ԽԱՐԲԵՐԴ.—Առաջն. Տեղապահ Տ. Դէորդ Ծ. Վրդ. Ասլանեան
ԿԱՐԻՆ.—Առաջնորդ Տ. Սմբատ Ծ. Վրդ. Սաատէթեան
ԿԻՐԱՍՈՆ.—Մաթոս էֆ. Թոքատդեան
ԿԻՒՄԻԻԼՃԻՆԷ.—Տ. Ներսէս Բնյ. Նշանեան
ՀԱԼԷՊ.—Առաջն. Տեղապահ Տ. Շահէ Վրդ. Գասպարեան
ՄԱՆԶԷՍԹՐ.—Առաջնորդ Տ. Դէորդ Ա. Եպիսկ. Իւթիւճեան
ՄԱՐԱՇ.—Տ. Հմայեակ Բնյ. Վարժապետեան
ՄԱՐԶՈՒԱՆ.—Յակոբ էֆ. Սրապեան
ՆԻԿՈՄԻԴԻԱ.—Տ. Ոսկի Բնյ. Պիպիեան

ՆՈՐ ԶՈՒՂԱ.—Առաջն. Փոխանորդ Տ. Բաղարատ Վրդ. Վարդապարեան
Շ. ԳԱՐԱՆՆԱՐ.—Տ. Նաթան Բնյ. Տառեան
ՈՒՇԱՔ.—Կարապետ էֆ. Բէհեանեան
ՊԱՆՏՐՄԱ.—ՊԱԼԸՔԷՍԻՐ.—Առաջնորդ Տ. Կարապետ Ծ. Վրդ. Մաղլումեան
ՊԱՂՏՍ.—Առաջնորդ Տ. Մովսէս Ա. Եպիսկ. Կէօմքիւքեան
ՊԱՅՐԱ.—Կարապետ էֆ. Բէրթաճեան
ՊԱՐՏԻԶԱԿ.—Յովհաննէս էֆ. Տ. Կարապետեան
ՊԷՅՐՈՒԹ.—Հոգեւոր Տեսուչ Տ. Եղեկէլ Վրդ.
ՊՐՈՒՍԱ.—Առաջնորդ Տ. Յովհաննէս Ա. Եպիսկ. Արչարունի
ՌՈՒՍՃՈՒՔ.—Տ. Մկրտիչ Բնյ. Մըրշնիկեան
ՌՈՏՏԱՍԹՕ.—Առաջն. Փոխանորդ Տ. Բարթող Ա. Բնյ. Թագճեան
ՍԱՄՍՈՆ.—Առաջնորդ Տ. Սահակ Ծ. Վ. Օտապալեան
ՍԵԲԱՍՏԻԱ.—Առաջն. Փոխանորդ Տ. Թէփիլէ Բնյ. Օտապալեան
ԱԵԼԱՆԻԿ.—Հոգեւոր Տեսուչ Տ. Կարապետ Բնյ. Թուխմանեան
ՍՕՅԻԱ.—Տ. Մեսրոպ Բնյ. Տ. Մեսրոպեան
ՏԱՐՏԱՆԷԼ.—Տ. Դիմաքսիոս Բնյ. Տրէգեան
ՏԷՏԷ-ԱՂԱՃ.—Տ. Գարեգին Բնյ. Տէօլլէթեան
ՏԻԳՐԱՆԱԿԵՐՏ.—Դաւիթ էֆ. Մովսէսեան
ՏԻՄԷԹՕԳԱ.—Տ. Դէորդ Բնյ. Թէրզեան
ՏՓՂԻՍ.—Հ. Առաքելեան
ՓԱՐԻԶ.—Հոգեւոր Տեսուչ Տ. Վառձապուհ Բնյ. Դիպարեան
ՔԷՍՍԹԷՆՃԷ.—Տ. Մատթէոս Բնյ. Մանիկեան
ՔՂԻ.—Առաջն. Տեղապահ Տ. Պսակ Վրդ.
ՅԻԼԻՊԷ.—Տ. Տաճատ Բնյ. Դերձակեան
ՅՐԷԶՆՕ.—Յակոբ էֆ. Նշկեան



ԺՈՂՈՎՐԴԱՅԻՆ ՇԱՐԱԹԱԹԵՐԹ

ԿՐՕՆԱԿԱՆ, ԱԶԳԱՅԻՆ, ԳՐԱԿԱՆ

Ա. ՏԱՐԻ

ՏԱՐԱԹ, 31 ՅՈՒՆԻՍ 1910

ԹԻԻ 18

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ.—Վերանորոգութիւն Հայ Եկեղեցւոյ, ՎԱՐԴԱՆ ՔԶ. ԱՍԼԱՆԵԱՆ.—**ԵԿԵՂԵ-**
ՑԱՒՐԱՒԱԳԻՏԱԿԱՆ, Կանոնք ժողովոյն Նիկիոյ, Ե. Ե. Դ.—Յիսուս եւ Աւետարանի քա-
րոզութիւնը, ՍՈՒՐԷՆ Վ. ԳԱԼԵՍԵԱՆ.—**ՕՏԱՐ ԵԿԵՂԵՑԻՆՆԵՐ,** Սպանիա եւ Վատիկան (Թրգմ.)
ՋԵՆՈՒ ՍՈՒՐԷՆԵԱՆ.—Յոյն եւ Պուլկար Եկեղեցիներ, ԽՄԲ.—**ՔՆՐԹՈՒԱԾՆԵՐ.** Կարօտի Խօս-
քեր, ԳՐ. Հ. ԳԱԼՈՒՍՏԵԱՆ.—Ապաշաւի ժամեր, ԱՐՇԱԿ Կ. ԹԻԹԻՆՃԵԱՆ.—**ՄՈՌՑՈՒԱԾ**
ԷԶՍԵՐ, Սիմոնական Տէրտէրը (շար. եւ վերջ) ԱՐՓԻԱՐ ԱՐՓԻԱՐԵԱՆ.—**ԱԶԳԱՅԻՆ ԿԵԱՆՔԸ,**
Շարժուան կարեւոր լուրեր եւ ժողովոց որոշումներ:

ՎԵՐԱՆՈՐՈԳՈՒԹԻՒՆ ՀԱՅ ԵԿԵՂԵՑԻՈՅ

ԵՐԲՈՐԴ ԵՐԴՈՒԱԾ(*)

ՍՈՒՐԲ ԳՐԲԻ ԽՆԴԻՐԸ

Եկեղեցիի վերանորոգութեան համար
լեզուի փոփոխութեան խնդիրը լուծելէ
վերջը, ամէնէն առաջ պէտք է անդրա-
դառնալ Ս. Գրքի կենսական խնդիրին:

Ա. ՏՊԱԳՐՈՒԹԻՒՆ

Ամենայն Հայոց հայրապետական աթո-
ռը շատ կանուխէն փափաքեցաւ Ս. Գրքի
հայկական օրինակը տպագրել տալ, և
1666 թուին դուրս եկաւ Հոլանտայի Ամս-
թէրամ քաղաքին մէջ Ոսկանեան տպա-
գրութիւնը: Այդ տպագրութեան մէջ կ'ե-

րեւար առաջին անգամ գլուխներու և
համարներու բաժանումը, իբրեւ լաւ նո-
րութիւն մը. իսկ Վաւկաթայի հետեւո-
ղութեամբ և խժալուր հայերէնով մը եղած
թարգմանութիւններ և մանաւանդ կանո-
նական ու անկանոն գրքերու խառն ի
խառն դասաւորումը՝ շատ շնորհակալ
սկզբունք մը կը նուիրագործէին, որուն
հետեւանքը մինչեւ ցայսօր կը կրենք: Ու-
կանեան տպագրութիւնը պատճառ կը
դառնար որ Հայ ժողովուրդը չգիտնար
թէ կաթողիկ կարգ ու սարքին համաձայն
եղած է այդ Ս. Գրքը և իբրեւ հայկա-
կան Եկեղեցիի վաւերացուցած ձեւը ըն-
դունէր շատ ժամանակներ:

Ս. Գրքի նոր տպագրութիւն մը պիտի
ե, և ա՛յն՝ զուտ Հայ Եկեղեցիի ընդունած
ձեւերովը, իբրեւ վերանորոգութեան հա-
մար էական ձեռնարկ:

Ոսկանեանին վրայ ձեւեց Մխիթար ար-
քան իր Աստուածաշունչը 1733ին, վասնզի
կաթողիկ սկզբունքն արդէն իսկ ապահով-
ուած էր անոր մէջ, հազիւ քսանի մը կըց-

(*) Բ. յօդուածը տես Թիւ 16:

կրտուր սրբաղբութիւններ լուսանցքներու մէջ նշանակելով, ա՛յնքան որ անիկայ երկիւղած ցոյց կուտար ինքզինք Ոսկանի տպագրին բնագրին մէջ ներմուծումը չենլէ:

Աւելի ազատամիտ ուղղութեան մը կը հետեւէր Զօհրապեան 1807ին, երբ իր բաղդատական Աստուածաշունչը կը հրատարակէր, և Սիրաքի անկանոն գիրքը «Կանոնական» գիրքերու ցուցակէն դուրս կը տպագրէր, ըսելով թէ՝ մեր Նախնիք գրած են, «իսկ արտաքուստ պատգամաւորեցի առ ի Սիրաքայն իմաստութիւն» և այլն:

Աւելի մասնագիտական տպագրութիւն մը Հայր Արսէն Բագրատունին կը հրատարակէր 1860ին: Իսկ աւելի վերջերս Պայպլ Հաուսը խնամալ աշխատութիւնով մը կը տպագրէր Ս. Գրքը, Հին Կտակարանի մասը երբայականին ու Նոր Կտակարանի մասը հելլենականին բաղդատելով:

1900 թուին հոգեւոյս Հայրապետը՝ Տ. Մկրտիչ Ա.՝ Կոնդակով մը կը հրատարակէր իր գաղափարը, թէ Ս. Էջմիածնի տպարանէն մտադիր է հրատարակել աւելի ընտիր ձեռագիրներու հետեւողութեամբ Ս. Գրքը, և բաժանորդագրութիւն մը կը բանար. սակայն այդ ձեռնարկն ալ չը յաջողեցաւ, ու չենք գիտեր թէ հոն կա՞յ հիմայ այդ մտադրութիւնը:

Ս. Գրքի նոր տպագրութիւն մը պէտք է, և շատ կատարեալ բան մը ըլլալու է այն, որպէս զի մեր Եկեղեցիին արժանապատուութիւնը պաշտպանուի, և որպէսզի մեր պատուական Նախնիքներու սուրբ յիշատակը յարգած ըլլանք, ժողովուրդին մէջ Ս. Գրքի ընթերցման հռանդը արթնցնելու նուիրական պարտականութեանը հետ միասին: Այո՛, Կ'ընդունինք թէ Ս. Գրքի տպագրութիւնը մեր Նախնիքներու ընտրելագոյն ձեռագրաց հետեւողութեամբ պիտի ըլլայ. սակայն անհրաժեշտ է որ՝ 1. Բաղդատուի մեր Ս. Գրքը՝ Եօթանասնից թարգմանութիւն եղող յունարէն հին ու պատուական ձեռագիրներու հետ, զոր օրինակ թէլէնտօրֆի ձեռագրին հետ, և մեր թարգմանութեան մէջ սպրդած սխալները

սրբագրուին: Արդի Ամեն. Ս. Պատրիարք Հայրը շատ գեղեցիկ յօդուածներու շարքի մը մէջ, զոր «Լուսանցքի Նօթեր» կը նշանակէր, ցոյց կուտար յունարէն սկզբնագրէն մեր թարգմանութեան ունեցած թերիները: Կը փափաքէինք որ առաջիկայ Համագգային ժողովը հրատարակէր վերաքննեալ Ս. Գրքը, ինչպէս ըսի՝ բաղդատուած յունականին հետ, և որ ըլլար Հայ ժողովուրդին համար գործածելի միակ Ս. Գրքը:

Բ. ԹԱՐԳՄԱՆՈՒԹԻՒՆ

Փափաքելի էր որ հրատարակելի Ս. Գրքը թարգմանուէր թէ՛ ռուսահայերէնի և թէ՛ թուրքահայերէնի. բայց ինչպէս ըսի, հայկական օրինակին վրայ ըլլար թարգմանութիւնը. վասնզի թէ և բողոքական Ս. Գրքի Ընկերութիւններ թարգմանած են զանիկայ աշխարհաբարի, սակայն Հին Կտակարանը բոլորովին կը տարբերի հայկական հին բնագրէն, քանի որ կը հետեւի երբայական բնագրին, ինչ որ մեր Եկեղեցիին համար փափաքելի չէր: Երբայական բնագիրը՝ թէ և պատուական, սակայն քանի որ մեր երանաշնորհ Նախնիք՝ հետեւելով Օրթոդոքս Եկեղեցիին ու Եօթանասնից օրինակին տալով նախապատուութիւն՝ թարգմանած են մեզի զայն, մենք չենք կրնար հետեւիլ ո՛չ կաթոլիկ Եկեղեցիի սկզբունքին և ունենալ «Վուկաթա»յի հետեւողութիւն, և ո՛չ ալ բողոքական Եկեղեցիի սկզբունքին և ունենալ երբայականը. այլ կը նախընտրենք «Եօթանասնից»ը և որուն վաւերականութեան կնիքը դրած է մեր Տէր Յիսուս Քրիստոս: Առաքեալներ բոլոր իրենց կոչումներն ըրած են Եօթանասնից օրինակէն. ուստի և լաւագոյն բնագիրը Ս. Գրոց՝ է Եօթանասնիցը, և որուն հետ բաղդատուելով տպագրելը և թարգմանելը կարեւոր ու անհրաժեշտ է մեր Եկեղեցւոյն համար:

Գ. ԿԱՆՈՆԱԿԱՆ ԵՒ ԱՆԿԱՆՈՆ ԳԻՐՔԵՐ

Ս. Գրքի կանոնական և անկանոն գրքերու խնդիրը շատ ծանրակշիռ հարցում մըն է, զոր պէտք է վճռել միանգամ ընդ

միշտ, և փակել տարածայնութիւններու դուռը:

Սամարական եկեղեցին ունի իրեն կանոնական գիրք՝ Հնգամատեններ և Յետուն:

Երրայական եկեղեցին կը ճանչնայ միայն Հին Կտակարանի 39 գիրքերը իբրեւ կանոնական, և զանոնք 22 հատորներու կը վերածէ:

Բողոքական Բրիստոնեայ եկեղեցին ճշտութեամբ կը հետեւի երրայական եկեղեցիին:

Կաթոլիկ Բրիստոնեայ եկեղեցին Տրիդենդեան իր ժողովին մէջ հանդիսաւոր կերպիւ հռչակած է թէ Ս. Գրքի մէջ եղած՝ Տոբիթ, Յուդիթ, Ա. Բ. Մակաբայեցիք, Բարուք, Իմաստութիւն Սողոմոնի, Սիրաք, Եզրաւ ևն., Եսթերի մէկ քանի գլուխները, Դանիէլի գրքին՝ Ագարիայի աղօթքը, Երեմիայի Մանկանց օրհնութիւնը, Բեդիլի եւ վիշապին պատմութիւնը, ասոնք բոլորն ալ միւս 39 կանոնական գիրքերուն հաւասար են:

Յոյն Օրթոտոքս եկեղեցին կը հետեւէր երրայականին և կ'ընդունէր թէ միակ կանոնական Ս. Գրքերն են որ հաւատքի մաս մը սահմանելու համար էական են, սակայն ատոնցմէ դուրս գտնուած միւս գիրքերը կրնան, կ'ըսէր, կարգացուի իրեն եկեղեցական գիրքեր:

Մեր երանաշնորհ Նախնիք հետեւեցան Օրթոտոքս եկեղեցոյ ըմբռնումին, ու թէ և վերոնշանակեալ երկրորդականոն գրքերն ու մասերը կանոնականներու հետ մէկ հատորի մէջ ամփոփեցին ու եկեղեցիին մէջ ալ կարդալ սահմանեցին, սակայն որոշ կերպով հռչակած էին թէ միայն կանոնական գրքեցն էր զոր Աստուածաշունչ կը համարէին:

Առ այս՝ ամէնէն երեւելի ապացոյցը կը կազմէ սա իրողութիւնը թէ, մինչդեռ 39 կտոր կանոնական գիրքերը թարգմանուած են բառացի ճշտութեամբ և խորին երկրազաւթութեամբ, սակայն ատոր հակառակ՝ երկրորդականոնները թարգմանուած են առանց՝ բառացի ճշտութեան և քերթողական ապատութեամբ: Այդ մասին շատ գեղեցիկ կը խօսի Մատթիոս Գարաբաշեան, որ կ'ըսէ. — Եթէ Մակաբայեցոց գրքի

թարգմանչին ձեռքով Հոմերոսը թարգմանուած ըլլար, հայերէն թարգմանութիւնը հեղինական բնագրին հետ լեզուի վսեմութեան կողմանէ պիտի մրցէր:

Խորենացի (Գիրք Գ. պր. 61) և Կորին կը վկայեն թէ թարգմանիչը «22 յայտնիս» թարգմանեցին: Հսկել է մեր թարգմանութեան ժամանակակից հեղինակներ ու թարգմանիչներ՝ կը վկայեն թէ Հայ եկեղեցին միայն 22 հասորներու մէջ եղած 39 կտոր Ս. Գրքերը կը ճանչնար իբրեւ կանոնական:

Դեռ հետաքրքրական պարագայ մ'ալ կար որ մեր թարգմանութիւնը Նոր Կտակարանի մէջ «Յայտնութեան» Գիրքը չունէր. հաղիւ հաղ ութերորդ դարուն կը թարգմանուէր անիկայ, և հետեւապէս Հայ եկեղեցիի ժամակարգութեան մէջ բնաւ չէ ներմուծուած Յայտնութեան Գիրքը:

ՎԱՐՈՏԻ ԻՍՈՒՔԵՐ

(Մնացեալը յաջորդ Թուով)

ՎԱՐՈՏԻ ԻՍՈՒՔԵՐ

Այս կեանքիս քոյր ժողովուրդն մեջ՝
Որ կը վերդովեն սիրտս շարաշար,
Հոգիս կարօտի մեկումով մ'անշիջ՝
Լուռ խորշ մը ունի պահուած քեզ համար:

Տառապանքներու քիտ խաչերուն շակ,
Թեւ ընկնաւ վիշտով անհրաժեշտ,
Պաշտօնիս անձկոս քափովն բովանդակ
Տեղ մ'ալ պահած եմ Բու խաչիդ համար:

Այս քափառսկան կեանքիս ընթացքին
Երբ լուսնիմ սեղ մը հանգիստ ու դադար,
Թեւ պատճառեմ եմ տառապագին՝
Բայց կուրծքս սեղ կայ Բու գիտնող համար:

Հոսանքներուն մեջ տարբեր սերերու
Թեւ տարուքեր հոգիս օճեղահար,
Բայց ամենեւի վեր, քոյրեկ հեռու
Սրբաւայր մ'ունիմ Բու սիրոյդ համար:

Որչափ ալ Չարը իր պատճանքներով
Ձիս քակարդելու փորձեր ընե յար,
Քեզի կը քերեմ այս սիրտս խրոնով՝
Ձի հոն կարօտ կայ Բու սրտիդ համար:

Բերա

ԳՐ. Լ. ԳԱԼՈՒՍՏԵԱՆ

ԵԿԵՂԵՑԱ-ԻՐԱՒԱԳԻՏԱԿԱՆ

ԿԱՆՈՆՔ ԺՈՂՈՎՈՅՆ ՆԻԿԻՈՅ

(ՅԱՄԱՆ 325)

1. Եթէ ոք ի հիւանդութեանն ի ձեռն բռնկաց խուզեացի՝ կամ ի բարբարոսաց, այնպիսին մնացէ ի կարգի ժառանգաւորաց, ապա եթէ յառողջութեանն զանձն ներքինացուցէ, զայնպիսին՝ արժան է՝ յետ քննելոյ՝ ի բաց հանել ի կարգէ ժառանգաւորութեան, և յայնմհետէ ո՛չ համարձակեցի մատչիլ ի նոյն աստիճան: Այս յայտնի իմն է վասն այնոցիկ՝ որ զձեռն եղեն իրացն և զանձինս ներքինիս առնել ժպրհեցան. իսկ եթէ ի բարբարոսաց կամ ի բռնաւորաց ներքինացան, և սակայն արժանաւորք ունանք իցեն, զայնպիսիս ի կարգի պահել հրամայէ կանոնն(*):

2. Եւ քանզի բազում ինչ կա՛մ ի հարկէ իմն կա՛մ ի բռնադատելոյ ու մանց գործեցան ընդդէմ եկեղեցական կանոնի, զոր օրինակ, արք որ ի նիթանոսական կենաց այն ինչ դարձեալք ի հաւատս և սուղ ինչ ժամանակս վարդապետեալք ի հոգեւոր աւագանն ածան վաղվաղակի և ընդ մկրտիլն ամբարձան ի կարգ եպիսկոպոսութեան կամ երիցութեան, բարւոք թուեցաւ՝ զի յետ այսորիկ այսպիսի ինչ մի եւս դիպեցի, զի ժամանակի պէտք են վասն երախտական ուսուցման, և յետ մկրտութեան՝ առաւելագոյն փորձոյ. քանզի իմաստուն է առաքելականն՝ զի որ ասէ (Ա. Տիմ. Գ. 6) «Մի մատաղատունկ, զի մի հպարտացեալ ի դատաստան և յորդայթ սատանայի անկանիցի»: Եւ եթէ առ յապա մեղ ինչ շնչաւոր(**) երեւեացի յանձին ժառանգաւորի ուրուք երկուք կամ երեք վկայութեամբ յանդիմանեալ, դադարեցի ի կարգէ ժառանգաւորաց:

(*) Թերչևս կ'ականարկուի առաքելական կանոններուն (21—24):

(**) Ուրիշ բացատրութեամբ՝ սնասնական մեղի:

բաց: Եւ որ ոք հակառակ կայ այսմ, և մեծի ժողովոյս անհնազանդ լինել յանդիմանեցի, լուծցի ի կարգէն իւրմէ:

3.—Ժողովս մեծ արգելու ամենեւին եպիսկոպոսի՝ երիցու՝ սարկաւազի և ում և իցէ ի կարգէ ժառանգաւորաց՝ ունել առ իւրեւ *συνείσηκτον* (*συνείσακτον*) զոք, բայց եթէ իցէ մայր կամ քոյր կամ հօրաքոյր կամ ա՛յլ ոք զորմէ չգուցէ տեղի կասկածելոյ:

4.—Եպիսկոպոսի պա՛րտ է մանաւանդ ի ձեռն ամենեցուն (եպիսկոպոսաց) որ ի վիճակին են՝ նստիլ յաթոռ, իսկ եթէ դժուարին լիցի այն, կա՛մ վասն ստիպող հարկի և կամ վասն երկայնութեան ճանապարհի, գոնեա՛ իրեք ունանք ի մի գայցեն և որք ոչն են անդ՝ թղթովք վկայութեան հաւան լիցին, և յայնժամ ձեռնադրութիւնն կատարեցի, և հաստատութիւն եղելոյն ա՛նկ է մետրապոլիտին յիւրաքանչիւր գաւառի:

5.—Վասն այնոցիկ որ ի հաղորդութեանէ մերժեալք են՝ եթէ ի ժառանգաւորաց ոք իցէ և եթէ ժողովրդական ոք, ըստ իւրաքանչիւր գաւառի՝ եպիսկոպոսաց կացցին կարծիք ըստ կանոնին հրամայելոյ եթէ՛ Բանադրեալքն յումնմէ՝ մի՛ յայլոց ընկալեալ լիցին: Արժան է քննել սակայն՝ զի մի՛ նոքա ի նեղսրտութենէ կամ ի յաղթասիրութենէ կամ յատելութենէ եպիսկոպոսին՝ բանադրեալք իցեն: Եւ զի այսպէս ըստ արժանն առնիցի քննութիւն՝ բարւոք թուեցաւ զի յամենայն գաւառս երկիցս ի տարւոյ ժողովք լիցին և գումարեացին ամենայն եպիսկոպոսք գաւառին առ ի քննելոյ զխնդիրս, զի իւրաքանչիւր ոք ծանիցէ թէ վասն յայտնի անհնազանդութիւն ընդդէմ եպիսկոպոսին ցուցանելոյ բանադրեալք են յիրաւի, մինչեւ ժողովոյ եպիսկոպոսացն հաճոյ թուեցի մարդասիրութիւն առ նոսա ցուցանել: Եւ ժողովք լիցին՝ առաջինն նախ քան զգաւանորդս, զի յետ ի բաց բառեալոյ՝ զամենայն նեղսրտութիւն՝ մատուցուք նուէր Աստուծոյ, և երկրորդն՝ յաշնայնի:

6.—Նախնեաց սովորութիւնն որ յեզրիպտոս, ի Լիբիա և ի Պնտապոլիս կացցէ մնացէ. այսինքն՝ Աղեքսանդրիոյ ե-

պիսկոպոսին իշխանութիւն ունել ի վերայ սոցա ամենեցուն . զի Հռովմայ եպիսկոպոսին ևս, այս սովորութիւն է . նոյնպէս և յԱնտիոք և յայլ գաւառս պատիւ մեծութեան պահեսցի յեկեղեցիս : Ամենեւին և այս յայտնի է զի եթէ ոք առանց հաւանութեան մեարապոլտին եղիցի եպիսկոպոս՝ այնպիսեոյն մեծ ժողովս որոշէ մի՛ ևս կալ յեպիսկոպոսութեան : Սակայն եթէ հասարակաց հաւանութեանն՝ որ բանաւորն է և ըստ կանոնի եկեղեցւոյ՝ հակառակ կացցեն երկու կամ երեք ոմանք առ նախանձու, բազմաց ընտրութիւնն հաստատեսցի :

7.—Վանդի սովորութիւն և աւանդութիւն նախնեաց ընկալեալ է զի Էլիայի (երուսաղէմ) եպիսկոպոսն պատուեսցի, ունիցի՝ ըստ կարգին զպատիւն, բայց մայրաքաղաքին պահեսցի արժանաւոր պատիւն :

8.—Որք անուանեն զինքեանս սուրբս, (καθολος) ի մերձենալ նոցա ի կաթողիկէ և յառաքելական եկեղեցի, հաճոյ թուեցաւ սուրբ և մեծի ժողովոյս՝ ձեռնադրութիւն ընդունել նոցա և մնալ այնպէս ի կարգին . այլ յառաջ քան զամենայն խոստովանել պարտ է նոցա գրովք եթէ յանձին կալցին և զհետ երթիցեն օրինացն (ծոյցս) կաթողիկէ և առաքելական եկեղեցւոյ, այսինքն է՝ (δυναμεις) երկկանանցն հաւատարել կամ որոց ի հալածանս էին և անկան, և որոց ամբ կարգեալ են և ժամ ընտրեալ (վանկ ապաշխարութեան) . այսպէս նոքա յամենայնի զհետ երթիցեն վարդապետութեանց կաթողիկէ եկեղեցւոյ, և եթէ ի գիւղս և ի քաղաքս՝ նոքա միայն գտանիցեն ձեռնադրեալք, անդ գտեալքն կացցեն միասցեն ի կարգի իւրեանց և ի նմին աստիճանի . այլ ուր իցէ կաթողիկէ եկեղեցւոյ եպիսկոպոս կամ երէց՝ և ի նոցանէ (ի ժառանգաւորաց նոցա) եկեսցին ոմանք, յայտ է զի եկեղեցւոյն եպիսկոպոս ունիցի զպատիւ եպիսկոպոսի . իսկ անուանեալ կա-

թարոսացն եպիսկոպոս զերիցու պատիւ ունիցի, բայց եթէ հաճոյ թուեսցի եպիսկոպոսի՝ զպատիւ անուանն տացէ նմա, ապա եթէ ոչ հաճոյ իցէ նմա՝ տացէ նմա զսեղի քոռեպիսկոպոսի(*) կամ երիցու, որպէսդի ամենեւեմք ի ժառանգաւորաց համարի երեւեսցի, և զի մի՛ ի միում քաղաքի երկու եպիսկոպոսցուք իցեն :

9.—Եթէ ոմանք առանց քննելոյ և փորձելոյ մերձեցան յերիցութիւն, կամ քննեալ խոստովանեցան զմեզս իւրեանց, և հակառակ խոստովանութեան նոցա՝ ընդդէմ կանոնաց ձեռս եղին ի վերայ նոցին արք ոմանք, զայս ոչ ընդունին կանոնք, և կաթողիկէ եկեղեցի կամի զի իցեն անարատք :

10.—Վանկ այնոցիկ որք յանկեղոցն ձեռնադրեցան (հայ թրգւ. օծան) եթէ անգէտք էին՝ կամ գիտէին որք մերձեցուցին, այս ոչ խափան ինչ լինի եկեղեցական կանոնի, զի ի յայտ գալ իրացն լուծցի (ձեռնադրեալն) :

(Մնացեալը յաջորդով)

Ե . Ե . Դ .

ԱՊՊԵՆԴԻՍ

ԳԵՐՍԵՄԱՆԻ ՄԸ ՍՐՏԻՍ ՄԷՋ

Յաւ, ջառապանք չեն առքեր ինձ սարսուռ, ահ, եւ ո՛չ ալ զիս կ'սեպեկէ անգութ մահ.
Զի Սիրով մը ընտ ու անկեղծ Գե'զ կ'ըղձամ,
Եթէ իսկ, Տհ'ր, վիշտ ու բախիծ ունենամ:

Դողգոքայի ժեռոտ շնունեմ դժուարին
Թե մագչիմ խալ մ'ալ առած իմ ուսին,
Այդ վերելք, ո՛հ, կը բուր ինձ դիւրին,
Զի գետին եմ Սիրոյդ անմե'ռ ու անգին:

Գերսեմանին ու Դողգոքան միաբան
Կը վկայեն Սիրոյդ անմե'ռ, անպաւան:
Սրտիս ալ մեջ Գերսեմանի մ'ըսեղծե
Որ ես հոնեղ վիշտ սուգ շինեմ աղօթի:

ԽՈՒՆԱ-ԲԵՐՈՂ

ԱՐՇԱԿ Կ. ԹԻԹԻՆՆԵԱՆ

(*) Հայ Թարգմանիչը այս բառը կը Թուի (ծոյցս) կարդացած ըլլալ, եւ ըստ այնմ. Թարգմանած է օրինաց:

(*) Հայ Թարգմանիչը այս բառին տեղ ունի, վերակացուքիւն գաւառի:

Յ Ի Ս ՈՒ Ս

Ե Ի

ԱՒԵՏԱՐԱՆԻ ՔԱՐՈՉՈՒԹԻՒՆԸ

Բ.

Ոմանք այս դիտումնաւոր լուծիւնը չեն կրնար հաշտեցնել Գրիստոսի անձին և բարոյական ու պատմական ճշմարտութեան հետ: Բայց այսօր անփութելիօրէն ապացուցուած է Յիսուսի մարդկայնականութիւնը. անհկա ի սկզբան աննշան մարդու մը պէս ապրեցաւ, և զարգացաւ մտաւորապէս ու փիլիքապէս. հետեւաբար քննադատներու կողմէ մատնանշուած լուծիւնը այս իրողութեան միայն կրնանք վերագրել: Իր մեսիական գաղափարը, որ զուտ հոգեկան էր, հետզհետէ զարգացաւ իր մէջ, և ո՛չ թէ անմիջական կերպով: Այս զարգացումը արդիւնքն էր ներքին պայքարի մը, ուրկէ յաղթական դուրս գալէ վերջ՝ Յիսուս սկսաւ ապաշխարութիւն և հաւատքով փրկութիւն քարոզել: Սակայն առաւել եւս սոսկալի ու վշտալի եղաւ այն պայքարը, զոր միջոց նա իր ժամանակի մեսիական հաւատալիքներու դէմ, որոնք սիրելի ու պաշտելի էին իր կրօնքը և հայրենիքը սիրող ամէն Իսրայելացիի համար:

Յիսուս այդ հաւատալիքներուն հիմնովին հակառակ եղող իր նոր վարդապետութիւնը տարածելու համար էր որ իր պաշտօնին մեծագոյն մասը զոհեց, որովհետեւ այդ սին ու սխալ հաւատալիքները գլխաւոր մտազբաղումը կը կազմէին իր ժողովուրդին:

Եթէ թալմուտները Յիսուսի չարչարանքի մասին որոշակի կը խօսին, պատճառն այն է որ անոնց խմբագիրները Գրիստոսնէութեան ազդեցութեան ենթարկուած էին. եթէ ո՛չ նման գաղափար մը բոլորովին անընդունելի ու գալթակղալից էր ամբողջ Հրէութեան համար. «Մեք քարոզեցաք զխաչելեալն Գրիստոս՝ Հրէից գայթակղութիւն և հեթանոսաց յիմարութիւն»⁽¹⁾ կը գրէ Պողոս:

(1) Ա. Կորնթ. Ա. 23.

Եսայիի մարգարէութեան այն գլուխները որոնք Փրկչի չարչարանքի մասին կը խօսին, այն ատեն Մեսիային պատշաճեցուցուած չէին տակաւին. Յիսուս ինք անձամբ ըրաւ այդ պատշաճեցումը, և առաջին անգամ ըլլալով, իբրեւ բոլորովին նոր իրողութիւն մը, յայտարարեց իրեններուն թէ նոյն իսկ ինքն է մարգարէներուն կանխագուշակած Մեսիան, որ պիտի չարչարուի, խաչուի և մեռնի: Այդ յայտարարութիւնը շատ մը անհեթեթ մեկնութիւններու տեղի տուած է թէ՛ հին և թէ՛ արդի քննադատներու կողմէ. բայց զարմանալին այն է որ Յիսուս իբրեւ Մեսիա՝ իրեն հաւատարմ փրկութեան միակ միջոցը նկատելով հանդերձ, բացորոշապէս կ'ըսէ թէ ինք խաչուած պիտի մեռնի, և չէ այն սպասուած թագաւորը որ քաղաքական մեծ յեղաշրջում մը պիտի կատարէ: Այս պարզ խոստովանութիւնը ինքնին բաւական է ծիծաղելու համար Յիսուսի անձին, անոր մտաւորական, հոգեկան ու բարոյական կացութեան մասին սկեպտիկ քննադատներու յայտնած կարծեաց վրայ:

Յիսուս իր հրապարակային կեանքի տեւականութեան մէջ փորձութեան կամ պայքարի երեք վայրկեաններ ունեցաւ: Առաջին՝ Անապատի փորձութիւնը, որ այնքան խորհրդաւոր կերպով պատմուած է Աւետարանին մէջ⁽²⁾, և որուն միակ պատճառն էր նոյն ժամանակի մեսիական գաղափարներու նկատմամբ իր ունեցած կասկածաբարութիւնը: Քառասուն օր շարունակ պայքարելէ յետոյ, վերջապէս յաղթական կը հանդիսանայ այս առաջին և խիստ փորձութեան մէջ: Երկրորդը կը պատահի իր մահէն մէկ տարի առաջ, կամ աւելի այն վայրկեանին երբ խաչուելու անխուսափելիութիւնը կը զգայ. Յիսուս ինքզինքը փորձութեան առջեւ կը գտնէ երբ Պետրոս կը գոչէ. «Բաւ լիցի քեզ, Տէր, մի՛ եղիցի քեզ այդ»⁽²⁾ Նա այնպէս կը կարծէ թէ ստատանան այս անդամ առաքեալին կերպարանքով է որ կը ներկայանայ իրեն,

(1) Մատթ. Դ. 1 եւ շար: Ղուկ. Դ. 1 եւ շար.

(2) Մատթ. ԺԶ. 22:

և առանց կարեւորութիւն տալու կը սաստէ, «Երթ յետս իմ, Սատանայ, գայթակղութիւն իմ ես» :

Հօրը կամքին համաձայն ինք պէտք է խաչուի և մեռնի, որովհետեւ հոն է յաղթութիւնը, հոն է փրկութիւնը. այս էր միայն Յիսուսի մտաւեւեռումը :

Բայց ամենէն աւելի երրորդ, այսինքն Զիլինեաց պարտէզի պայքարն էր որ ջնջեց Յիսուսի անձին մէջ հրէական գաղափարը, և ստեղծեց միախառն նոր հաւատալիքը : Անշուշտ անիկա կրնար այդ պայքարէն ալ յաղթական դուրս գալ և մահէ ազատիլ. սակայն այդ կերպով իր կամքին պիտի հպատակած ըլլար և ո՛չ թէ Հօրը : Անիկա խմեց Հօրը առաջարկած բաժակը, յաղթեց աշխարհի վերջնականապէս, միտաւ իր գաղափարին համար, որ էր ամբողջ մարդկութեան փրկութիւնը : Եւ տակաւին քննադատութիւնը՝ այդ գաղափարի անյողդողդ զինուորը իր ժողովրդին հաւատալիքներով առգորուած, իր յաջողութիւններէն գինովցած, և իր աշակերտներու խանդավառութենէն շլորած մէկը կը ներկայացնէ մեզի : Մենք յանուն պատմութեան և յանուն այն ստուգուած իրողութիւններուն, որոնք Յիսուսի անձին կը վերաբերին, կը բողոքենք այդ սին ենթադրութիւններուն դէմ : Լնդհակառակն անիկա այնքան քիչ ազդուած է, այնքան անկարեւոր նկատած էր իր ժամանակի միախառն գաղափարները, որ առաջին օրէն իսկ ջանաց հիմնովին բարեփոխել զանոնք :

Յիսուսի ուսուցումը և քարոզած վարդապետութիւնը, մէկ խօսքով հոգեպաշտական (spiritualiste) և ընդհանրական հակազդեցութիւն (réaction) մը եղաւ, հրեայ ժողովրդին մասնակցութեան (particularisme) և ձեւապաշտութեան (formalisme) դէմ :

Ուրիշ որդեգրած էր Յիսուս հակազդեցութեան այդ սկզբունքը : Ոմանք այս մասին մեծ դեր մը կը վերագրեն Յովհաննէս Մկրտչի. ուրիշներ Հին Կտակարանէն, Սաղմոսներէն, Նաայիի և Երեմիայի մարգարէութիւններէն օգտուած կը կարծեն : Սակայն պէտք է խոստովանիլ թէ Յիսուսի

համար ընդոճին էին այդ նոր գաղափարները, և իր Հօրը հետ ունեցած հաղորդակցութեան կամ ներշնչումի (inspiration) երկար ժամերուն մէջ, աւելի ևս զարգացուց զանոնք : Ուրեմն Յիսուս յաստուածուստ ներշնչեալ մը եղաւ ինքնին, և մենք տրամաբանօրէն կրնանք ըսել թէ, առաջին դարուն ո՛չ թէ Յիսուսի խօսքերը, այլ աւելի անոր անձն էր որ իբրեւ նորութիւն հետաքրքրութեան առարկայ դարձած էր : Անոր երեւումը, իր ուսումը, գործերը, իր անքողը կեանքը հրաշք մըն է արդարեւ : Այդ կեանքէն զատ անկարելի է մարդկութեան համար՝ գտնել մէկը, որ կարենայ որդիական անկեղծ հաղորդակցութեան մը մէջ դնել զինքը Աստուծոյ հետ : Ասիկա ճշմարտութիւն մըն է, ապացուցած՝ պատմութեան, խղճի և բանականութեան կողմէ :

Ուրեմն քրիստոնէութեան origines-ներու հարցը անլուծելի չէ որ և է քրիստոնեայ անհատի համար : Մեր էութիւնը յաղթած և յաղթուած է... և մինք սրտովին պէտք է խորունկ սէր մը տածենք անոր հանդէպ որ միզի համար ապրեցաւ ու տանջուեցաւ, այդ գերերկրային Մարդուն հանդէպ որուն բարոյական դիւցազնութիւնը՝ սա բառերուն մէջ կը խտանայ. «Ամէն պարագայի մէջ պիտի խմեմ այն բաժակը, զոր Հայրս տուաւ ինձ խմելու համար» :

Որքան ծանծաղամիտ պէտք է ըլլայ մէկը, կասկածի ենթարկելու համար պատմութեամբ վաւերացուած անձի մը գոյութիւնը, անձ մը հրաշալի և գերբնական, որ ամբողջովին թշնամի երկրի մը մէջ, իր հոգեկան և բարոյական կորովով տիեզերական փրկութեան գաղափարը կ'իրականացնէ, առանց կարեւորութիւն ընծայելու ժամանակի ըմբռնումներուն, ժողովրդին և իրեններուն խանդավառութեան :

Ահա այս կերպով էր որ փրկեց Յիսուս մարդկութեան կրօնական ապագան : Ռեանան իր «Յիսուսի կեանքը» սա բառերով կը վերջացնէ. «Մէկը չպիտի կրնայ գերազանցել զայն, Մարդոց Որդիներուն մէջ Յիսուսէ աւելի մեծ մէկը չէ ծնած» : Ահա խօսք մը իսկապէս քրիստոնէական ու ճշմարիտ, որ երբէք սրտասանուած ըլլայ աշխարհի մէջ :

Յիսուսի քարոզած բարոյական սկզբունքները առ ոչինչ գրեւու, քրիստոնէութեան ժամանակը լրացած նկատելով զայն ջնջելու և ոչնչացնելու համար պիտի Յիսուսը գերազանցուի, եւ աշխարհը անկե աւելի մեծ մեկը ծնի: Ասիկա անկարելի է, և քանի որ անկարելի է, ներքին ամբողջ համոզումովս կը հաւատամ թէ Քրիստոս Աստուածորդի է, կը խոստովանիմ թէ քրիստոնէութիւնը ճշմարտութիւնն է ինքնին:

Սկիւսար

Բաղեց

ՍՈՒՐԵՆ Վ. ԴԱԼԵՄԵԱՆ

(Edmond Stapferի
«La Palestine» գիրքէն.)

ՕՏԱՐ ԵԿԵՂԵՑԻՆԵՐ

ՍՊԱՆԻԱ ԵՒ ՎԱՏԻԿԱՆ

Վատիկանի դժուարին շրջան մը կ'անցընէ. քիչ մը ամէն կողմ, Եւրոպայի Հիւսիսէն Հարաւ, Արեւելքէն Արեւմուտք, Կաթոլիկ և Բողոքական եկեղեցիներուն մէջ, վէճի բռնուած է զանազան կառավարութեանց հետ, և այս դժուարութիւններէն, որոնցմէ կան որ խիստ ծանր են, ինքն է որ մեծ մասամբ պատասխանատու է իր յամառութեան (intransigence) համար:

Սուրբ-Աթոռը, չրջանամակներով (encyclique) կամ իր յաւակնութիւններով հանրային կարծիքին դժգոհութիւնը և իշխանութեանց բողոքները կը յարուցանէ Գերմանիոյ, Աւստրիոյ, Հոլանտայի, նոյն իսկ Փորթուկալի մէջ: Բայց վէճը ամէնէն աւելի սուր է Սպանիոյ մէջ. հոս է որ Վատիկան ինքզինքը ցոյց կուտայ ամէնէն աւելի կորովալից, ամէնէն աւելի բռնն, որովհետեւ զօրաւորագոյն կը կարծէ ինքզինք:

Երկար տարիներէ ի վեր բարեփոխուելու, նոր պայմաններուն յարմարեցուելու պէտք ունի այն Դաշնաթուղթը (concordat) որ կնքուած է Պապութեան և սպանիական կառավարութեան միջև: Բոլոր ողջամիտ

Սպանիացիք կը գտնուան, օրինակի համար, թեմերու չափազանց մեծ թիւէն. վանքերու և միաբանութիւններու արտակարգ բազմապատկումէն աւելի ևս կը գտնուան: Թերակողմին, ուր անշուշտ պակաս չէին վանականներ և կոյսեր (nonne), առած է բոլոր այն վանականները, բոլոր կոյսերը որոնք այս վերջին ժամանակներս մեկնած են Բուլգարի, Փիլիպպեաններէն կամ Ֆրանսայէն: Բոլոր այս միաբանութիւններն եկած հաստատուած են՝ առանց նոյն իսկ իմաց տալու քաղաքական իշխանութեանց, ընկերակցութիւններու օրէնքը բռնաբարելով այսպէս: Աւելի ծանր պարագայ մըն ալ կայ. այդ միաբանութիւններուն մէջ կան որ իրենց գործունէութիւնը չեն սահմանափակեր աղօթքի, գթութեան կամ ուսուցչութեան մէջ: Ճարտարագործութեամբ և առուտորով կը զբաղին: Այն հազար առանձնաշնորհումները որոնցմէ կը նպաստաւորուին, տուրքերու ղեղչը կամ նոյն իսկ ապահարկութիւնը, ճրի, կամ զրեթէ ճրի ձեռք բերուած գործը թոյլ կուտան իրենց՝ արտադրելու և ծախելու չատ աւելի լաւագոյն պայմաններով, քան մասնաւոր ճարտարագործութիւնը որ սոսկալիօրէն կը միասուի այս անիրաւ մրցումէն: Անցեալ ամառ Պարսիկոնայի մէջ յառաջ եկած արիւնալի խռովութիւնները, վանքերուն աւերումն ու հրկիզումը մասամբ կը բացատրուին այն կատաղութեամբ զոր գործաւորները կը զգային վանականներուն այս մրցումին դէմ:

Այն զանազան ազատական նախարարութիւնները որոնք իշխանութեան վրա իրարու յաջորդեցին այս վերջին տարիներու մէջ, Դաշնաթուղթին բարեփոխման նկատմամբ բանակցեցան ուրեմն Վատիկանի հետ: Բայց նոյննախարարութիւնները կարճ կը տեւէին. անոնք անցան և Վատիկան կը մնայ: Պահպանողական Դաշնիկներ կը յաջորդեն անոնց, որոնք ոչ պէտք, ոչ ալ փափագ ունին Դաշնաթուղթը ու եւ թանկ մը փոխելու: Այս շատ պարզ պատճառով է որ խնդիրը ցարդ բանի մը չյանգեցաւ:

Պ. Քանալէյաս, յառաջացած արմատական, որ քիչ մը աւելի կորով ցուցնել

պարտաւոր էր իր ծագումով, իր համոզումներով և իր կուսակիցներով, տագնապը փութացուց: Նախարարապետը վերստին ձեռք կ'առնէր Սուրբ Աթոռին հետ իր նախորդին՝ Պ. Մորէի սկսած բանակցութիւնները, թագաւորին ձեռքով հրովարտակ մը հրատարակելով որ Հռոմի և սպանիացի կղերականներուն զայրոյթը չարժեց անմիջապէս: Տասը յունիսի այս հրովարտակը թոյլատու մտածութեամբ մը տարբեր պաշտամունքներուն թոյլ կուտար արտաքին նշաններ կրելու. և որովհետեւ Ապանիոյ մէջ ցրուած քանի մը տառնեակ բողոքական մատուռները այլ եւս իրաւունք պիտի ունենային տախտակ մը կամ արծա՜նագրութիւն մը դնելու իրենց դրան վրայ, ասիկա բաւական եղաւ Սուրբ-Աթոռը զայրացնելու և սպանիացի կաթողիկոսներու թշնամութիւնը զրգռելու համար: Նուիրակը (nonce) բողոքեց անմիջապէս: Պապը ըսպառնաց յարաբերութիւնները խզել: Կառավարութիւնը իրաւունք չունի, կ'ըսէ ան, իր կամքին համաձայն փոխելու ու է քան մը սպանիական եկեղեցիէն, որ Պետութեան եկեղեցի ճանչցուած է, մինչ կը բանակցի միւս կողմէ Սուրբ-Աթոռին հետ: Կաթողիկ կիներու բազմաթիւ ընկերակցութիւններ նախարարապետը պաշարեցին, պաղատելով որ կրօնքին դէմ չկանգնի: Բայց նախարարապետը կը յաւակնի յարատեւել իր սկսած գործին մէջ. կը վստահեցնէ թէ թագաւորը իր զօրավիգն է, և երկրին մեծամասնութիւնը իրեն հետ:

Ահաւասիկ գործերուն վիճակը: Կը տարածայնուի թէ Վատիկանի սպանիական դեսպանը իր պաշտօնը պիտի ձգէ հիւանդութեան պատրուակով, որ դիւանագիտական հիւանդութեան մը երեւոյթը ունի բոլորովին: Ասիկա պիտի հաստատէ թէ Պապը մտադրած է տեղի չտալ բնաւ. անիկա ինքզինք զօրաւոր կ'զգայ միշտ Սպանիոյ հանդէպ:

Jean Lery Թրգմ. ԶԵՆՈՐ ՍՈՒՐԵՆԵԱՆ

×

ՅՈՅՆ ԵՒ ՊՈՒԼԿԱՐ ԵԿԵՂԵՑԻՆԵՐ

Օրաթերթերու ընթերցողներուն ծանօթ է բուռն յուզումը որուն մատնուած է Յոյն եկեղեցին, Օսմ. Խորհրդարանէն քուէարկուած այն օրէնքին առթիւ, որով Բուլղարի նահանգներուն մէջ Պուլկարաց սեփականութիւն կը դառնան այն եկեղեցիները, ուր պուլկար տարրը մեծամասնութիւնը կը կազմէ քրիստոնեայ բնակչութեան: Պուլկարաց նպաստաւոր այս որոշումը նոր առիթ մը եղած է աւելի ձկտեալ վիճակ մը տալու Յոյն և Պուլկար եկեղեցիներուն յարաբերութեանց, թէև Պուլկարաց եկզարք խոհեմազարդ Տ. Եօսիֆ կ'ըսուի թէ փափաքող է Տ. Եօսիֆ Պատրիարքին հետ անձնական տեսակցութեամբ մը վերջ տալու վէճին, որ արդիւնք կը նկատուի խոշոր թիւրիմացութեան մը: Ուշադրաւ է սակայն ներկայ պարագային մէջ հրատարակուած լուր մը, թէ պուլկար եկեղեցիներու մէջ, ուր արդէն պուլկար լեզուով կը կատարուին արարողութիւնք, — բայց Աւետարանները յունարէն կը կարդացուէին ցարդ, — պուլկար Սինօդը վերջին նիստին մէջ որոշեց է պուլկարական լեզուի թարգմանել Աւետարանն ալ, և այսուհետեւ միայն Աւագ շարժուն յունարէն լեզուով պիտի կարդացուին Աւետարանները՝ պուլկար եկեղեցեաց մէջ:

ՄՈՌՑՈՒԱԾ ԷԶԵՐ

ՍԻՄՈՆԱԿԱՆ ՏԵՐՏԵՐԸ

(Շար. Ասխորդ քիւէն եւ վերջ)

Տէր Վարդան շփոթած, սրտմտած, բան մը չկրցաւ ըսել. խոնարհեցաւ և դուրս ելաւ: Անօգուտ սեպեց դիմել Կրօնական Ժողովոյ անդամներուն, առանձինն առանձինն դանձնք համոզելու համար: Պատրիարքին հաստատամտութիւնը քաջ կը ճանչնար. երբ Պատրիարքը դիմադրեց, ամէն ինչ վերջացած կրնար համարուիլ:

Նոյն օրը Մայր վարժարանի մէջ կրօնագիտութիւն դասախօսելու օրն էր, բայց այնքան յուզուած էր տէրտէրն որ իրեն անհնարին եղաւ դպրոց մտնել: Տեղ մը նստելու անկարող էր. ելաւ դպրոցէն և սկսաւ քալել դէպի Սամաթիայի ճամբան:

Պայծառ արեւ կար, բայց օդը ցուրտ էր. Տէր Վարդան կը քալէր ու կը խորհէր: Իրեն համար տարակոյս չկար թէ առանց այս ամուսնութեան Պետրոս ու Սուրբիկ չուտով պիտի մտնէին գերեզման: Ինչ օգուտ ազգին, ինչ շահ եկեղեցւոյ՝ այս մահերէն. երկու երիտասարդներ մեռած, երկու ընտանիք թշուառացած, երկու խեղճ մայրեր դժբաղդ եղած. միթէ այս ամէն աղէտներն Աստուծոյ հաճոյ էին. և ինչպէս կարելի է որ հաճոյ ըլլան, կը մտածէր, Աստուած սէր է և գութ ու գութով: Ծերունի տէրտէրը անկարող էր ըմբռնել թէ ինչ փնտս կրնար առաջ գալ երկու երիտասարդներու ամուսնութենէն: «Ո՛չ Աւետարանին մէջ, ո՛չ Աստուաչունչի մէջ այսպիսի արգելիչ օրէնք մը կայ, կ'ըսէր ինքնին. ուրիշ քրիստոնեայ ազգեր ալ այսպիսի օրէնքներ չունին: Եւ արդարեւ տրամաբանօրէն ալ այսպիսի օրէնքի մը գոյութեան պատճառ չկայ: Երկու քոյր բնաւ արիւն չունին օտար երկու եղբօր հետ. արիւնին իրարու չի խառնուիր, հետեւաբար բժշկական օրէնքներով ալ այս ամուսնութիւնը արգիւելու պատճառ մը չկայ: Հազար տարի առաջ ո՞վ գիտէ մեր Նախնիք ինչ մտածութեամբ ասանկ կանոններ դրած են, բայց հիմակուանները հազար տարի առաջ հարկ եղած պէտքերուն պիտի զոհուին: Զէ՛, աս ա՛լ ըլլալու բան չէ: Այսպիսի պարագաներու մէջ Պատրիարք ու Կրօնական Ժողով պէտք է աչք գոցեն. սակայն ամուրի եկեղեցականներու սիրտը խստացած է. անոնք ընտանեկան զգացումներէ զրկուած են, հետեւաբար ինչպէս ժողովուրդի վրայ սէր, գութ, գութով ունենան: Մեզի պէս անոնք ալ զաւկի տէր ըլլալու են, ժողովուրդի մէջ խառնուելու են, անոր ցաւերը ու վշտերը տեսնելու են որպէս զի գիտնան թէ ինչ կայ աշխարհիս մէջ:»

Այս տեսակ էին Տէր Վարդանի մտածութիւնները. և քանի՛ կը մտածէր այնքան աւելի կը տաքնար, կը զայրանար ու կը խանդաղատէր:

Այս մտածութիւններէն մղուած՝ սկսաւ խորհիլ թէ ինչ էր իր պարտականութիւնը այս պարագային մէջ. իբրեւ հայր ժողովրդեան, իր խղճին ու համոզումին անսալ, թէ իբրեւ ստորագրատեալ պաշտօնեայ մը հնազանդիլ նուիրապետական օրէնքներով իրեն վրայ իշխողներուն, որք իբր կրօնաւոր իրմէն աւելի իրաւունք մը չէին կրնար վայելել:

Լսել իր խղճին: Բայց վտանգն սպառնալից էր, դատապարտութիւնն անխուսափելի:

Խղճին հնազանդելով վտանգի ենթարկուելու գաղափարն հրապուրիչ գրգռու մըն էր փրկիստփայ քահանային: Այդ գրգռու կը հարուածէր անոր ամէն վարանումները:

Կը քալէր ընկղմած այս մտածութիւններուն մէջ, և ահա հասած էր Նառլը Գաբու. քանի մը քայլ եւս, ու պարսպին դուռը կը հասնէր. այդ քանի մը քայլն ըրաւ, մտաւ պարսպի դռունէն ներս և գնաց Ս. Յովհաննէս եկեղեցին. աղօթելու և Աստուծոյ օգնութիւն խնդրելու անձկակարօտ էր:

Աշխարհէ անջատուած, Մարմարայի անհունութեան մէջ ոսկետուփիկ կղզեակ մըն է այդ եկեղեցին. հեռու աղմուկէ, շառաչիւնէ, իրեն կը քաշէ ցաւած սրտերը, վշտահար ոգիներն որք գործնական աշխարհէ դուրս, անկէ շատ վեր կը փնտռեն իրենց միաթարանքն ու զօրավիգը:

Խորանին առջև չորեցաւ տէրտէրն. աղօթեց երկար ատեն. ներշնչում խնդրեց, իբր վեր ելաւ, սրբեց աչքերն. հոգին զօրացած էր. ամէն տարակոյս իրեն համար փարատած էր: Ով որ ծարուեալին կ'արբուցանէ բաժակ մը ցուրտ ջուր, Քրիստոսի հաճոյ գործ ըրած է. այս է Աւետարանի պատուէրը. և ով որ հակառակ ամէն աշխարհային օրէնքներու՝ մահուանէ կը փրկէ Աստուծոյ երկու արարածները, միթէ իր ներողութիւնը արդէն չէ՞ ստացած նոյն իսկ Աւետարանէն, որու պատուէրները գեր ի վերոյ են ամէն օրէնքէ:

Տէր Վարդան այլ եւս տուած էր իր որոշումը. պիտի պսակէր Պետրոսն ու Սուրբիկը :

Եկեղեցիէն դուրս ելաւ . յոգնած էր, չէր կրնար քաշել . սպասեց շոգեկառքին, մտաւ մէջն և իջաւ Գում-գաբու :

Ժ .

Տէր Վարդանի կարճաօտ կենսագրութիւնն ընել աւելորդ չենք համարիր :

Երեսուն և հինգ տարիէ ի վեր քահանայ էր . ձեռնադրուած էր երեսուն և հինգ տարեկան եղած ատեն : Ապրելու անողոր հարկէն չէր մղուած այդ սուրբ պաշտօնին դիմելու համար : Ազգային և Սրբազան պատմութեան, ու, ինչպէս այն ատեն կ'ըսէին, հայկարանութեան վարժապետ էր . բաւական չափով հանդիստ կ'ապրէր : Ազգն ու Եկեղեցին ջերմապէս կը սիրէր . տառապեալները մխիթարելու ներքին կուշում մը կը զգար . անձնութեան քահանայ եղաւ : Անոր յաղմամայ պաշտօնավարութեան վրայ զրելու շատ նիւթ չունինք : Ազգատներու բարերարն էր, թշուառներու սիրտիչն, և գիտենք թէ թշուառն ու աղքատը նման են հաւին որ, ըստ ժողովրդական արտայայտ աւանդութեան, երբ ջուր խմէ, կտուցը կը բարձրացնէ երկինք : Աստուծոյ շնորհակալ ըլլալու համար . այսպէս են խեղճերն ալ, բարիք մը կը տեսնեն և գլուխնին երկինք բարձրացնելով կը գոհանան :

Դէպք մը միայն լսած ենք .— Տէր Վարդան իր քահանայութեան առաջին օրերը շատ հետամուտ եղաւ պանդուխտներն ինք թաղելու . Գում-գաբու պանդխտութեան մեռելատանն է : Տէր Վարդան կը յաճախէր խաներն և շատ մեռելներու դագաղին առջեւէն ինք կ'երթար . միւս քահանաները թշնամացան . պանդուխտ մեռելները հասոյթի աղբիւր են : Տէր Վարդան շուտ արգիլուեցաւ խաները թափառելէ . բայց իր յաջորդները տեսան թէ հասոյթները նուազած էին : Տէր Վարդան պանդուխտներէ ստակ չէր առնէր . այդ խեղճերն ալ չտալու վարժեցան . բաւական ժամանակի կարօտացաւ Գում-գաբուի քա-

հոնայից դասը՝ ջնջելու համար այս նորելուկ սովորութիւնը :

Տէր Վարդան շատ կը փարդար . օտապէս լեզուի տեղեակ չէր, բայց հայերէն գրքերը մեծ մասամբ կարդացած էր . ճոխ դարան ունէր ուր աստուածարանական և պատմական գրքերու հետ միասին կը գտնուէին շատերն այն վէպերէն որք թարգմանուած էին վերջին քսան տարիներու մէջ : Շատ կ'ախորժէր այդ վէպերէն, որոնցմով գաղափար մը կ'առնէր եւրոպական քաղաքակրթութեան և մտածութիւններու :

Այդ վէպերուն մէջ ամէնէն աւելի, կամ լաւ եւս բացարձակապէս սիրածն, ու կրնանք ըսել պաշաածը Թշուառներն էին : Այդ վէպին մէջ կը գտնէր իր սրտին արձագանգները :

Թշուառներու թարգմանութեամբ Պ. Գրիգոր Չիլինկիրեան մեծ փոփոխութիւն ներմուծեց գաղափարներու մէջ : Ժողովուրդի մտքին վրայ խորին տպաւորութիւն սկսեցին թողուլ այդ վէպի դիւցազներն, և մտքերու ուղղութիւնը յեղաշրջեցին : Արդարեւ Թշուառները համար պէտք է բաւական մտաւոր պաշար պատմական, տնտեսագիտական և փիլիսոփայական հմտութիւններու, սակայն անոր դիւցազներն իրենց պարզութեանն ու վեհութեանը մէջ կը տիրեն հոգւոյ վրայ, կը սարսեն զայն և կրնան ձգել իրենց ետեւէն : Պիէյվընիւ եպիսկոպոսն ու Ժան Վալթան կրնան մտածին սիպարներ ըլլալ, բայց միանգամայն այնքան ներգործել մտքի ու սրտի վրայ՝ մինչեւ հետեւելու օրինակներ հանդիսանալ այն ոգիներու համար՝ որք արդէն բարձրէն սաւառնելու համար ստեղծուած են, բայց թռիչ ու ասպարէզ պակասած է իրենց :

Պիէյվընիւ եպիսկոպոսն ու Ժան Վալթան Տէր Վարդանի մտատկաւարներն եղած էին : Որչափ կարդար անոնց կենսագրութիւնը, չէր յագենար .

Այդ իրիկունը վերագառնալով իր պտոյտէն, Տէր Վարդան երբ նստաւ պատահանին առջեւ, արեւը մարը կը մտնէր կարմրորակ ներկելով հանդարտ միապաղաղ ծովն . աչքերը ծովուն յառած, մըտ-

քովը կը թափառէր այն սենեակին մէջ ուր ալեւոր ժան Վալթան հոգեմաշ մտատանջութիւններու մէջ ընկղմելէ յետոյ կ'որոշէր զո՞նք ո՛չ միայն իր հանգիստն, իր երջանկութիւնն, այլ և իր կեանքը՝ պարտականութիւն մը կատարելու համար։ Խանդավառ արտով ստեղծուած տէրտէրը հաճոյք կ'ըզար, թերեւս առանց գիտակցութեան, որ պիտի կարենար նմանող ըլլալ այն ժան Վալթանին որուն պատկերն իր սրտին մէջ քանդակուած էր։

Մութը տիրեց, ճաշի ժամն եկաւ. տէրտէրը սեղան իջաւ, լաւ կերաւ։ Սեղանէն նոր ելած սուրճ կը խմէր. դուռը զարկին։ Պետրոսն էր։

ԺԱ.

Եթէ արդարեւ ուրախութեան աղբիւրը վիշտն է և առանց մեծ ցաւի չկայ մեծ խնդութիւն, ինչպէս կը պնդեն իմաստասէրներէ ոմանք, կրնանք հաւատալ որ Պետրոս ամուսնանալով անարգել ի Պոյաճըզեղ, երբեք պիտի չզգար այն անհուն բերկրանքն որ ողողեց իր սիրտը՝ երբ Տէր Վարդան հաղորդեց նմա իր մօտաւոր ամուսնութեան լուրը։ Ամէն ինչ կարգին էր, պայմանաւ որ պսակը պիտի կատարուէր առանց աղմուկի, առանց ձայն ձունի, Ենի-Պաքուէն գուրս։ Պետրոս ենթադրեց, և շատ բնական էր այս ենթադրութիւնը, թէ Պատրիարքն այս պայմանաւ միայն հրաման տուած էր։

Տէր Վարդան յանձնառու եղաւ երթալ խօսիլ երկու մայրերուն հետ։ Պետրոսի վիճակն այնքան վրդոված էր Շաղիկ տուտուի սիրտն, որ խեղճ կինը իբր աւետիս մը լսեց թէ Սուրբիկի հետ կարգուելով Պետրոս պիտի առողջանար, պիտի փոխուէր։

— Ընտո՞ր ալ ֆառիսին չգացի, կ'ըսէր հառաչելով։

Ֆուլիկ տուտու երջանկութեան գազաթնակէտն հասած էր։ Աղջկը ոչ միայն պիտի փրկուէր այլ և պիտի կարգուէր։

Նոյն կիրակին Մարանկոզեաններն ու Գուլումճեանները գնացին Սան-Սդէֆանօ՝ Մարանկոզեաններու ազգական կնոջ մը

տունը։ Տէր Վարդան պսակեց Պետրոսն ու Սուրբիկը։ Ստեփանիկ կնքահայր եղաւ։

Պետրոս և կինը երկու շաբաթի չափ անցուցին Սան Սթէֆանօ. այդ միջոցին Մարանկոզեանք փոխադրուեցան ուրիշ գեղ մը, ուր եկաւ Պետրոս ալ կնոջը հետ։

Ուրախութիւնը վերստին կը տիրէր իրենց տան մէջ։ Ամէնքն ալ երջանիկ էին։

ԺԲ.

Պետրոսի կարգուելէն ամիս մը վերջ ազգային առաջնակարգ լրագիրը խմբագրականին մէջ հետեւեալ տողերը կը հրատարակէր շաբաթ օր մը.

«Ինչպէս կ'երեւի ազգային լրոց մէջ հրատարակուած կրօն. Ժողովոյ որոշումներէն, Մայր Եկեղեցւոյ քահանաներէն Տէր Վարդան անուամբ տէրտէրը մէկ տարուան փրկնադրկութեան դատապարտուած է՝ Հայաստանեայց սուրբ Եկեղեցւոյ օրինաց հակառակ գաղտագողի կերպիւ ապօրինի պսակ մը կատարած ըլլալուն համար։

«Սոյն քահանան իր ծուխերէն Մարանկոզեան Պետրոս անուն անձը կը պսակէ յոյժ մօտաւոր ազգականի մը հետ, Պէշիկթաշ բնակող Գոյումճեան Սուրբիկ անուամբ աղջկան մը հետ։ Ամուսնացեալք — չենք գիտեր թէ ներկի՞ է այս անունը տալ ապօրէն պսակեալներու — խոյս կուտան իրենց բնակած թաղէն և կ'երթան Սկիւտար ամէն աչքէ հեռու. սակայն Պատկ. կրօն. Ժողովոյ կորովաբիւ աչքերէն ոչ ինչ կը վրիպի. երկու շաբաթ առաջ եղելութիւնը կ'իմացուի և զօջաքաղ քահանան կը դատապարտուի տարուան մը փրկնադրկութեան։

«Պատկ. կրօն. Ժողովոյ այս վճիռը մեծ գոհունակութիւն պիտի պատճառէ հանուր ազգին։ Մեր առաքելական սուրբ Եկեղեցին մեր ազգութեան ամպօղանին է, և ընտանիքը մեր ազգութեան հիմը կը կազմէ։ Մեր երանաշնորհ Նախնիք խորին հաւատեստութեամբ սահմանած են այն օրէնքներ որոցմով կարելի է հաստատուն պահել ընտանիքն ապաքէն և ողջը։ Եկեղեցւոյ պաշտպանութեան յանձնուած են այդ օ-

րէնքներն. երբ Եկեղեցւոյ պաշտօնականներէն մին օրինազանց կը գտնուի, պատիժն անհրաժեշտ է:

«Սակայն հանդէպ այս վճռոյն մեր գոհունակութիւնը չափաւորող պարագայ մը կայ, պատժոյն թիւիւ ըլլալն: Այդ չքահանայն ըստ մեր խոնարհ կարծեաց պէտք էր քննարկել աւելի խիստ պատժոյ ի խրատ այլոց:

«Երբ Եկեղեցւոյ մի պաշտօնայ քանի մը մէջտեղէ չհանելու համար կ'ուրանայ իւր սուրբ կոչումն և կուտայ ինքզինքը սիմոնականութեան, Եկեղեցին իր մէջէն անհետ ընելու է սիմոնական տէրտէրը: Այսպիսի խիստ տնօրինութիւններով միայն կարելի է անվթար պահպանել մեր բազմաչարչար Եկեղեցին:

«Մասնաւոր տեղեկութիւններէ կ'իմանանք նաև թէ Պէղծեան վարժարանի Պատուարժան Հոգաբարձութիւնն առանց սպասելու Պատկ. Կրօն. Ժողովոյ վճռոյն, անմիջապէս պաշտօնէ դադրեցուցեր է Տէր Վարդանն: Այս տէրտէրը կրօնագիտութեան դասախօսութիւն կ'ընէր Պէղծեան վարժարանի մէջ:

«Սքանչելի՛ դասախօս: Կեղծաւորութիւնը սիմոնականութեան կոթնած:

«Արդեօք ազգային սնմեղ մանկտւոյն համար բարեբաղդութիւն չէ՞ որ այսպիսի պարագայով մը ճանչցուեցաւ այդ չիքն և նոր սերունդն աղատեցաւ անոր մոլորեցուցիչ ոգիէն:»

ԱՐՓԻԱՐ ԱՐՓԻԱՐԵԱՆ

Վ Ե Ր Ջ

ԱԶԳԱՅԻՆ ԿԵԱՆՔԸ

ՄԻԹԻՆԿԻ ԽՆԴՐՈՅՆ ՇՈՒՐՋԸ

Ս. ՊԱՏՐԻԱՐԷ ԶՕՐ ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՆՆԵՐԸ

ԱԶԳ. ԺՈՂՈՎԻՆ ՄԷՋ

Միթինկի խնդիրը փակուած պէտք է նկատուէր՝ Վարչութեան չրջաբերականէն ետքը, զոր հրատարակեցինք անցեալ շաբ-

թիւ: Բայց Ազգ. Երեսփոխաններու փոքրամասնութիւն մը բողոքող էր—և է միշտ—մեծամասնութեան որոշումին դէմ: Այդ բողոքողներէն 16 ստորագրութեամբ գիր մը կարգացուեցաւ Ազգ. Ժողովին անցեալ Ուրբաթի նիստին մէջ, որով կ'առաջարկուէր «Եկեղեցիները բաց պահել բանախօսութիւններու առջեւ, որովհետեւ կաթողիկոսին կոնդակին մէջ այդպիսի արգելք չկայ»: Հակառակ Ատենապետին յայտարարութեան թէ այս հարցն օրինական մեծամասնութիւն եղած նիստի մը մէջ նկատողութեան պէտք է առնուի, ստիպմամբ խօսք ուղղուեց եղան և թեր ու դէմ կարծիքներ յայտնուեցան: Ուշագրաւ էին այս առթիւ Ամեն. Ս. Պատրիարք Հօր ըրած հետեւեալ յայտարարութիւնները.—

«Վերջերս պատահած ցաւալի դէպքերուն համար, որոնք վշտի մէջ թողուցին մեզ, կը սպասէի որ Ժողովին իր ցաւը յայտնէր: Ես յանուն ազգին կը յայտնեմ այս ցաւը և մանաւանդ իրեն դառնալով, վասն զի ամէնէն աւելի մենք իսկ պատճառ տրւած եղանք թիւրիմացութիւններն աճեցնելու և կիրքերը բռնկեցնելու: Կը ցաւիմ ոչ թէ միայն որովհետեւ մէկ երկու հոգի կորսնցուցինք (Իզմիրի դէպքին ակնարկելով), այլ անոր համար որ այդ ոճիրը գործուեցաւ իբրեւ թէ ազգովին: Երբեք առիթ մը չփնտեցինք զիրար հասկնալու, այլ ընդհակառակն միշտ հակառակեցանք իրարու դէմ: Այս բարոյական սպանութեան առջեւ է որ մանաւանդ կը սոսկամ ես, և ազգին անունով ցաւ կը յայտնեմ եղած այս բաներուն համար: Միթինկի այս խնդիրը գիտէք որ բաւական ձգձգումներէ վերջ որոշման մը յանգեցաւ, և Վարչութիւնը վերջին անգամ հարկադրուեցաւ նոր շրջաբերական մը հանել: Հիմակ ալ երբ ըսուի թէ այս նոյն շրջաբերականն ալ նոր կուեներու և արեւահեղութիւններու դուռ պիտի բանայ, ես կը սարսափիմ պատասխանատուութենէ: Ամէն ոք կըրնայ իր համոզումներն ունենալ, բայց ոչ ոք ազգին ճակատագրին հետ խաղալու իրաւունք ունի: Քիչ մը առաջ երեսփոխան մը կ'ըսէր թէ իսկ ժողովին նոր շրջաբերականը նոր

փորձանքներու դուռ պիտի բանայ: Եթէ ազգային իշխանութիւն չունինք, եթէ օրէնք չունինք, եթէ Պատրիարք ու Վարչութիւն չունինք, ըսելիք չկայ. հրատարակենք ուրեմն որ անիշխանութեան մէջ կ'ապրինք և ասկէ առնենք քաղենք: Եթէ ասոնց բոլորը կան, ինչպէս որ գիտենք թէ կան, այն ատեն պէտք է հպատակինք օրէնքին առջև. ես պատասխանատու մարդ եմ: Եթէ վաղը միւս օր բան մը պատահի, ո՛չ ոք ձեր օձիքէն կը բռնէ, բայց ես կ'երեւակայեմ ձեռքեր որոնք զիս պիտի բռնեն: Խո՛ծի համար թոյլ կը շարժիս ըսին և օտար թերթեր իսկ քննադատեցին զիս: Բռնէ՛ք, կ'աղաչեմ, ի՞նչ կրնայի ընել ես, ո՛րը որուն կրնայի զոհել. երկուքն ալ իմ զաւակներս էին: Բայց ես կը խորհիմ թէ երբ մենք զիրար հասկնանք, այս խնդիրը միանգամ ընդ միշտ կը վերնայ մէջտեղէն: Հիմա այն պիտի ժամանակ չէ որ ելլենք նկատի առնենք թէ այսինչը Պատրիարքին, այնինչը Վարչութեան, ուրիշ մը Ազգային Ժողովին համար անկարող և անարժան պիտի ըսէ: Մեր տեսակէտը միմիայն Ազգին շահն ըլլալու է. օտարները մեր վրայ կը խնդան եղեր. որո՞ւ հոգ. արդէն ատիկա իրենց հին աւանդութիւնն է: Հիմա՛ սա վայրկեանիս ահաւոր վտանգի մը առջև կը գտնուինք: Ես այն կողմն եմ որ եթէ նոյն իսկ ազգային արժանապատուութենէն, ազգային իշխանութեան հեղինակութենէն բան մը զոհել հարկ ըլլայ, զոհենք, որպէս զի արեւն չթափի, որպէս զի եղբայր եղբօր դէմ չլինուի: Լա՛ւ գիտցած եղէք որ ազգային իշխանութիւնը և կուսակցութիւնները զիրար կը լրացնեն: Եթէ մին ինչայ, միւսն ալ կ'իյնայ: Ասոնք երկուքն իրարու հետ ա՛յնպիսի կապեր ունին որ պէտք չէ բաժնուած ապրին իրարմէ: Իմ պարտքս է ատիկա ըսել: Ես իմ ձեռքս զէնք չունիմ, իմ բերանս օրհնութիւն ունի միայն Ժողովուրդին բոլոր խաւերուն համար, եւ իմ սիրտս ամէնուն առջև ալ բաց է: Հո՛ս, պիտի խնդրեմ որ իբր ուխտատեղի մը նշկատենք այսօր, և ամենքս ձեռք ձեռքի տուած թոյլ չտանք որ այս տեսակ դէպքեր պատահին: Ես կրնամ վստահա-

ցընել որ բոլոր կուսակցութիւններն ալ անխտիր խորին ցաւ կը զգան եղածներուն վրայ: Անցածն անցած է. ներկան և ապագան դարմանենք. կը վախնամ որ ժամանակ չենք ունենար մենք մեր վրայ լալու: Ամենքս ալ պէտք ունինք մէկգմէկու, չքաժնուինք, միանանք իրարու և ինքզինքնիս ծաղրելի վիճակի մէջ չդնենք: Ես իբր նախագահ Վարչութեան, չըջաբերականը կը ստորագրեմ, և հոս իբր նախագահ Ազգ. Ժողովին, անոր հակառակ դիրքի մը մէջ կը գտնուիմ: Այս անգամ ալ նորէն իշխանութիւնը թող ոտնակոխ չըլլայ, այսինքն թէ այդ չըջաբերականը գործադրուի: Ես կը կրկնեմ որ մեր կուսակցութիւններն ալ ժամանակի մը համար կը դադրին բանախօսութիւն ընելէ: Ես յանձնարարած եմ իրենց որ միւս կողմէ դպրոցներու և այլ սրահներու մէջ ինքզինքնին որոշ և յստակ կերպով բացատրեն: Վստահ եղէք որ կուսակցութիւններն ազգ. իշխանութեան հակառակ չեն. եթէ Ժողովը այս տրամադրութիւնն ունի, համերաշխ միանք. հակառակ պարագային՝ շատ դժուարութիւններ պիտի ծագին: Երեք ամսուան միջոց մը պիտի ուզէի, որպէս զի միտքերն հանդարտին, և կուսակցութիւն ու ազգային իշխանութիւն միացած՝ համերաշխութեան գետին մը գտնէին և մեծ փորձանքներէ ազատէին Ազգը: Վերջապէս, երկուստեք զոհողութիւն պէտք է»

Ժողովը հաւանեցաւ Ս. Պատրիարք Հօր քաղձանքին, և որոշեց 16 երեսփոխաններու ստորագրութեամբ ներկայացուած գիրը անցընել օրակարգ, պայմանաւ որ երեք ամիս վերջը միայն ի նկատ առնուի, և մինչեւ այն ատեն գործադրուի Խառն Ժողովին որոշումը: «Երեք ամիս վերջը» որոշումն օրինական այն հիման վրայ էր թէ որոշում մը կրնայ երեք ամիս վերջը քննուիլ և Ազգ. Ժողովոյ մէջ վիճաբանիլ: Մայր Դիւանն Ազգ. Ժողովոյ այդ որոշումը մասնաւոր ազդարարութեամբ մը ծանուց թերթերու մէջ:


* Ազգ. Ժողովոյ նոյն օրուան նիստէն ետքը 20ի չափ երեսփոխաններ խորհրդակցութիւն մը կատարած են՝ միթիւնկի խնդ-

րոյն չուրջը համաձայնութիւն մը գոյացնելու միջոցներուն վրայ. բայց որոշ եզրակացութեան մը կարելի եղած չէ յանգիլ. այն պատճառով մանաւանդ որ երեսփոխաններուն հազիւ մէկ հինգերորդը ներկայ էր: Կը լսուի թէ այդ գումարման մէջ Ս. Թեքէեան էֆ. յայտնած է որ իրրու չեզոք երեսփոխաններ՝ իրենք ունէ հաւաքակութիւն չունին կուսակցականներու դէմ. բայց կ'ուզեն գիտնալ թէ ո՞վ է իսկապէս ազգին համար աշխատող, տառապող կուսակցականը, որպէս զի ա'յն իրաւունք ունենայ յարգանքի «հատեր կուսակցական ենք, կ'ըսեն. արդեօք ասոնց ամէնքն ալ իրաւունք ունին յարգանքի»:

Ճաշարի դէպք մը տեղի ունեցաւ Կիրակի օրը Բերայի Արուեստանոցին մէջ, ուր Սահմանադրական-Թաւաղարական կուսակցութեան Պոլսոյ գործադիր ճիւղին անդամ Վահան էֆ. Թէքէեան բանախօսեց օրուան հարցերու վրայ, երկու ժամու չափ, քննադատելով կարգ մը կուսակցականներու ծայրայեղութիւնները, որով կը նկրտին տկարացնել Ազգ. իշխանութեանց հեղինակութիւնը, և ոտնակոխ ընել նուիրական աւանդութիւններն և սրբութիւնները: Բանախօսը քննադատեց նաեւ պատրիարքարանի թոյլ ընթացքը՝ միթինկներու խնդրոյն մէջ: Ըսաւ թէ միթինկներն եթէ եկեղեցւոյ կամ անոր շրջափակին մէջ գումարուին, ազգին վրայ պատասխանատուութիւն կը հրաւիրեն, ինչպէս՝ հակառուս միթինկը Բերայի եկեղեցիին մէջ: Ահա այս գիտակցութեամբ էր որ ժողովուրդը միահամուռ դէմ կապուեցաւ կուսակցականաց պահանջումին, եկեղեցւոյ մէջ միթինկ սարքելու: Թէքէեան էֆ. ի խօսքերուն պատասխանել ուզեց Մովսէս անուն Դաշնակցական մը, և թէեւ բանախօսը այդ վերջնոյն ստիպման վրայ բնւ. հրաւիրեց զինքը, բայց ներկաներու ստուար մեծամասնութիւն մը չուզեց լսել զայն: Ասոր վրայ բռնու վէճ մը ծագեցաւ, որուն յաջորդեց ձեռկուռք մը, որու միջոցին վիրաւորուեցան Լեւոն Ղարաբեան, Վահէ Մեծատուրեան և ուրիշ մը չատեր ճալուքներ ստացան, և սրահին մէկ քանի ապա-

կիները կոտորեցան: Ներկաներէն ծպտեալ ոստիկան մը անմիջապէս սուլել սկսաւ և վարկինաբար դէպքին վայրն հասան ոստիկաններ և ոստիկան-ղինուորներ, որոնք 25 հոգիի չափ մարդիկ ձերբակալեցին: Ասոնց մէջ էր նաեւ Վահան էֆ. Թէքէեան, որ իր բանախօսութեան վրայ հարկ եղած բացատրութիւնները տալէ ետքը ազատ արձակուեցաւ: Իրիկուան դէմ ազատ արձակուեցան նաեւ միւսները, բացի մէկ երկու հոգիէ:

Այս դէպքը որչափ Հայ, նոյնչափ և Թուրք չըջանալներու մէջ տխուր տպաւորութիւն առաջ բերած է: Եւ երեւակայել որ կուսակցականներէ ոմանք դեռ կը պընդեն եկեղեցիներուն մէջ բանախօսել !...



ԵՐՈՒՍԱԿԵՄԱՆ ԳՈՐԾԵՐ. — Խառն ժողովը, Դ. ի հիստին մէջ, ինկատ առաւ Երուսաղէմի տեղապահական խորհրդական Տ. Տրդատ Եպիսկ. Պալեանի զրկած հաշուեցոյցը՝ Ս. Աթոռին նախորդ տարւոյ մատակարարութեան, նաեւ ներկայ տարւոյ ելմտացոյցը, ուրկէ կը տեսնուի թէ վերջին եռամսէին մէջ 1050 ոսկի վճարուած է սոկոսաւոր պարտուց: Ներկայ տարւոյ ելմտացոյցը թէեւ 75,000 դր. ի բաց մը ցոյց կու տայ, բայց կարելի է զայն հաւասարակշռել խնայողութիւններով և յաւելուածական հասոյթներով: Ժողովը չնորհակալութիւն յայտնեց Տ. Տրդատ Եպ. ի՝ ձեռք բերած յաջողութեանը համար, և այս տեղեկագիրն ևս յանձնեց իր անդամներէն Հայկ էֆ. Խօսքերեանի, բաղդատական ուսումնասիրութեան համար: Փաստաւորան ինչիւր Սիմոնեան և Աւետիս Սուրենեան էֆէնտիները ժողովին ներկայանալով, բացատրութիւններ տուին Տ. Դեւոնդ Ծ. Վ. Մազսուտեանի վրայ գտնուած կալուածներու մասին, յայտարարելով որ Տ. Դեւոնդ Ծ. Վ. պատրաստ է ազգին վերադարձնել միաբանական օրինաց համաձայն իր վրայ արձանագրուած կալուածները: Ժողովը իր կողմէ պատուիրակ կախեց Հայկ էֆ. Խօսքերեանը՝ փաստարանական յանձնաժողովին մօտ, փութացնելու համար այդ խնդրոց կարգադրութիւնը:

ԽԱՌՆ ԺՈՂՈՎԸ ԴՆ. օր ցաւօք լսեց Իզմիրի մէջ պատահած վերջին ցաւալի զէպքին վրայ առաջն. փոխանորդին կողմէ տեղեկագրուած մանրամասնութիւնները, և գործակատար էֆ.ին յանձնարարեց փութացնել նորընտիր առաջնորդ Տ. Մատթէոս Ծ. Վ. Խնձէեանի Պէրաթին ստացումը, որպէս զի անյապաղ երթայ իր պաշտօնատեղին:

ՍԿԻԻՏԱՐԻ Ս. Կարապետ Եկեղեցւոյն մէջ Վարդավառի առթիւ Ս. Պատրիարք Հայրն անցեալ կիրակի պատարագելով, իր քարոզին մէջ ակնարկեց վերջին օրերս տիրող վիճակին, և միութեան ու համաձայնութեան կարեւորութիւնը զգացուց, մաղթելով որ վերջ գտնեն եղբայրասպան կռիւներ, որոնք ազգը վարկաբեկ կ'ընեն և չարաչար կը վնասեն անոր:

ԱԴՐԻԱՆՈՒՊՈԼՍՈՅ Առաջնորդ ընտրուեցաւ Գեր. Տ. Աբաէն Ծ. Վ. Վեհուհի: Կը շնորհաւորենք էտիրնէի ազգայինները՝ որ գիտցած են իրենց քուէները կեդրոնացնել այնպիսի եկեղեցականի մը վրայ, որ անյողդող ու կորովի նկարագիր մը ցոյց տուած է միշտ, ազգային Եկեղեցւոյ նուիրական շահերը պաշտպանելու համար, և գիտցած է ժողովրդային անկեղծ սէր ու համակրանք բոլորել իր շուրջը: Խառն ժողովն հաստատեց այս ընտրութիւնը:

ՊԱՏՐ. ՓՈԽԱՆՈՐԴ ՀՕՐ մասին կատարուած քննութեան արդիւնքը Խառն ժողովը պաշտօնագրով մը ուղղած էր Ազգ. ժողովին, յայտնելով որ զեղծում չկայ գործուած, այլ բնդ հակառակն Սահմանադրութենէն ետքը գաղթականաց գործին մէջ իր ջանքերն արժանի էին նիւթական և բարոյական վարձատրութեան: Ազգ. ժողովը՝ անցեալ ուրբաթի նիստին մէջ, թերութեամբ կարծիքներ յայտնուելէ ետքը, Վարչութեան տեղեկագիրն ընդունեց 21 քուէով:

ղեցական-ծիսական բարեկարգութեանց մասին:—2. Ի նկատ առաւ ժողովական Տ. Վահան քհ. Խոյեանի հետեւեալ առաջարկները.—Ա. Ամուսնութենէ առաջ երկուստեք բժշկական վկայական պահանջել: Բ. Ծիւղահամարի, հասի չհասի որոշ կանոններ և օրէնք սահմանել: Գ. Ամուսնալուծման զանազան պարագաները ճշգրտ բացորոշ օրէնք մը խմբագրել, ևն: Ժողովը որոշեց գաւառներէ եկած ամուսնական և ամուսնալուծական խնդիրները իրենց առաջնորդարաններուն վերադարձնել, Սահմանադրութեան ապակեդրոնացման սկզբունքին համաձայն, վերջնական կարգադրութիւնները անոնց կողմէ ըլլալու համար, եթէ պէտք եղած օրինական քննութիւնները կատարուած են, խոստովանութիւններ լսուած, փաստեր զննուած և հրապարակային յայտնութիւններ եղած:—3. Ժողովը մերժեց Տ. Անանիա Վ. Հաղարապետեանի խնդրանքը՝ քարոզչական պաշտօնի մը կոչուելու, քանի որ Բաբերդի Առաջն. տեղապահ նշանակուած է, և հոն անմիջական պէտք կայ իր ներկայութեան:—4. Որոշեց յանձնարարել Շապին Գարահիսարի Առաջն. Փոխանորդ Տ. Վաղինակ Վ. Թորիկեանի, որպէս զի ազդու քարոզութիւններով զգուշացնէ իր հօտը, չհրապուրուելու համար մարդորսական հնարքներէ, և հաւատարիմ մնալու Մայր Եկեղեցւոյ:—5. Լուր առնուած ըլլալով թէ Սղերդի նախորդ տեղապահ Տ. Կորիւն Վ. Սրապեան իր գտնուած վայրը ցարդ անծանօթ պահած է, ժողովն որոշեց յանձնարարել Տիարաքիւրի առաջնորդ Տ. Զաւէն Ծ. Վ. Ի. որ ստուգէ իր վիճակին մէջ յիշեալին ո՛ւր գտնուիր, և անոր կենցաղի մասին ևս տեղեկութիւններ հաղորդէ:—Ասոնցմէ զատ ժողովն զբաղեցաւ տեղական և գաւառական կրօն. խնդիրներով:

ԿՐՕՆ. ԺՈՂՈՎԻՆ ՈՐՈՇՈՒՄՆԵՐԸ

1. Կրօն. ժողովը, ԴՆ.ի նիստին մէջ, որոշեց Համագումար ժողովը նիստի հրաւիրել, Սեպտ. 14 ԴՆ. օր, Ղալաթիոյ Խորհրդարանը, խորհրդակցելու համար եկե-

ԱՐՏՕՆԱՏԵՐ

ՀՄԱՅՆԱԿ ԳԶՆՅ. ԷԲՍԷՐՃԵԱՆ

ՏՆՕՐԷՆ-ԽՄԲԱԳԻՐ

ԶԱՐԽԱՅՐ ԳԶՆՅ. ԿԷԶԻՒՐԵԱՆ

ՏՊԱԳՐՈՒԹԻՒՆ Օ. ԱՐՁՈՒՄԱՆ

Զաւահիճըյաւ, Յակոբեան խան

ՀԱՆԴԵՍ ԱՄՍՕՐԵԱՅ

Վիեննական Հայերու հմտակց հրատարակութիւն, նուիրուած Հայ բանասիրութեան, Հայ պատմութեան, և ընդհանրական ուսումնասիրութեան: Ներկայ տարեշնչանին հոգ տարուած է մասնաւորապէս ժողովրդային պահանջներու ալ գոհացում տալու: Տարեկան բաժնեգին՝ 15 ֆր. կամ 6 րր.: Մէկ թիւ 1.50 ֆր.: Հասցէ՝ Rédaction de la Revue «Handess Amsorya» VIENNE VII/2, Mechitharistengasse 4.

Հրատարակուեցաւ Յուլիս-Օգոստոս միացեալ թիւը ճոխ պարունակութեամբ:

ԲԱԶՄԱՎԷՊ

Ամսագիր ազգային, բանասիրական, գրական և գիտական, պատկերասրահ

Վենետիկեան Հայերու հրատարակած այս Հանդիսարանը ամէն ամիս կը բերէ մեզի Հայ մատենագրութեան և Հայ այժմէութեան նուիրուած հմուտ յոգուածներ և տեսութիւններ: Տարեկան բաժնեգին 10 ֆր. կամ 50 լիւր: Հասցէ՝ — Rédaction de la Revue «Bazmabep», St. Lazare, Venise (Italie).

Հրատարակուեցաւ յուլիսի թիւը ճոխ պարունակութեամբ:

ՍՍԱՅՈՒԱԾ ԳԻՐՔԵՐ

ԻՍԼԱՄՈՒԹԵԱՆ ՄԱՐԳԱՐԷՆ ՄԱՀՄԷՏ

Իմաստասիրական գործ թ. Բարլայն անգլիացիին: Գին 5 լիւր: Կը ծախուի Պալենց, Սիւնեաց և Ալճեան գրատունները:

Յ. Գ. ՄՐՄԸՐԵԱՆԻ ՎԵՐՋԻՆ

Գ Ո Ր Ծ Ե Ր Է Ն

Հին Օրեր և Պուէտ Խաչատուր Միսաքեան, գին 7ու կէս լիւր:

19րդ դար, Թովհ. Պրուսացի Տերոյեանց, գին 12ու կէս լիւր:

Ստուերի հին դէմքերու, տաճնեակ, գին 5 լիւր:

Թրքահայ հին վաճառականութիւն և վաճառականի, գին 10 լիւր:

Ալեքոյիս, տաճնեակ իմաստասիրական, 7 լիւր:

Պատմութիւն Թուրքահայոց (Գ. Բաժանորդագրութիւն) մէկ բաժին 30 լիւր:

“ARMENIA”

Անգլիերէն ամսագիր, որ գեղեցիկ ու իրապէս օգտակար նպատակն ունի առանց կուսակցական շահերու ծանօթացնել Հայ յուլիւնը՝ Ամերիկայի, և պաշտպանել Հայ ազգին պատիւն ու շահերը: Ասկէ առաջ կը հրատարակուէր ի Պոսդըն, այժմ կը շարունակուի Նիւ-Եորք, խմբագրութեամբ Ամերիկայի ամէնէն աչքառու գրողներու: Տարեկան բաժնեգին՝ Ամերիկայի համար՝ 1 տոլար, Թուրքիոյ 30 լիւր: Հասցէ՝ Editor of «Armenia», NEW-YORK, 33 Union Square.

Պատ. հեղինակներն և հրատարակիչներն եթէ կ'ուզեն իրենց գործերը ծանուցուած տեսնել Տաճարին մէջ, պէտք է խմբագրութեան ղրկեն երկերկու օրինակ այդ գործերէն, որոնց վրայ ի հարկին պիտի խօսուի մասնաւոր գրախօսականով: